ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՐԳԱՍԱԲԵՐ ՈՒՂԻՆ



Լրացավ անվանի գիտնական, վաստակաշատ հնագետ-պատմաբան Գրիգոր Հովհաննեսի Կարախանյանի ծննդյան 80-ամյակը:

Գ. Կարախանյանն անցել է գիտության գործչի երկարամյա, արգասավոր ուղի:

Ծնվել է 1927 թ. հունվարի 10-ին Ջավախքում՝ Ախալքալակի շրջանի Դիլիսկա գյուղում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում: 1945-1950 թթ. ընդունվել և ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, 1953-ին ավարտել է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրան՝ «հնագիտություն» մասնագիտության գծով՝ աշակերտելով անվանի հայագետներ, ակադեմիկոսներ Հովսեփ Օրբելուն և Բաբկեն Առաքելյանին: 1953-1959 թթ. աշխատել է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում: ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հիմնադիր անդամներից մեկն է, որտեղ աշխատել է 1959 թվականից: 1978-2005 թթ. ինստիտուտի Միջին դարերի հնագիտության բաժնի վարիչն էր, իսկ ներկայումս առաջատար գիտաշխատող է:

1954 թ. պաշտպանել է «Դվինի և Անիի պեղումներով հայտնաբերված նկարազարդ խեցեղենը» թեկնածուական թեզը:

Գ. Կարախանյանը հնագիտության մեջ մտավ իբրև միջնադարյան Հայաստանի նյութական մշակույթի մասնագետ, մեծ ճանաչում ձեռք բերեց հատկապես քանդակի ու կոթողային արվեստի հուշարձանների ուսումնասիրության բնագավառում: Այս թեմային են նվիրված «Հայկական գերեզմանական հուշարձանները և նրանց քանդակները» (1959), «Մակարավանքի քանդակները և նրանց հեղինակը» (1974), «Որսի տեսարաններ 13-րդ դարի պատկերաքանդակներում» (1974), «Դիտողություններ 12-րդ դարի երկու հուշարձան կոթողների մասին» (1975), «Հայաստանի միջնադարյան կենցաղային քանդակները» (1975), «Աշխարհիկ կյանքը քարգործ վարպետների ստեղծագործություններում» (1976), «Երաժիշտ կատարողների քանդակները 12-13-րդ դարերի խաչքարերի վրա» (1978) աշխատանքները: Դրանցում նա հմտալի քննության է ենթարկել հայ քարգործ վարպետների կերտած կոթողային հուշարձանները: Նրա ուսումնասիրությունների շնորհիվ պարզվեցին միջնադարյան հայկական ճարտարապետության երկու կարևորագույն կոթողների՝ Մակարավանքի և Խամշի վանքի ճարտարապետների՝ Երիտասարդի ու Հովասաբի անունները:

1960-ական թվականներին Գ. Կարախանյանը ձեռնամուխ է լինում հայագիտության մեջ սակավ ուսումնասիրված հնագույն ժայռապատկերների ուսումնասիրությանը, որի արդյունքում 1970 թ. հրատարակվում է «Սյունիքի ժայռապատկերները» ստվարածավալ ժողովածուն (Պ. Սաֆյանի համահեղինակությամբ): Դրանցում ներկայացված են նախնադարի մարդու կյանքն ու կենցաղը, նրա զբաղմունքները, պաշտանմունքն ու ծեսը, պատկերացումները:

Բազմազան է ու տարաբնույթ Գ. Կարախանյանի գիտական հետաքրքրությունների ու ուսումնասիրությունների թեմատիկան: Այն ընդգրկում է հայ ժողովրդի բազմադարյան մշակույթի ուսումնասիրությունը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև միջին դարեր, ներառելով նաև հայոց ազգագրությունն ու բանահյուսությունը: 1994 թ. նրա խմբագրությամբ ու ծանոթագրություններով Փարիզում անգլերենով հրատարակվում է անվանի հայագետ Աշխարբեկ Քալանթարի գիտական ժառանգության առաջին ժողովածուն՝ «Հայաստանը քարե դարից միջին դարեր» խորագրով:

Վաստակաշատ հայագետի բեղմնավոր գիտական ժառանգության զարդն է կազմում նրա մի քանի տասնյակ տարիների տքնաջան աշխատանքի արդյունքը՝ «Հայոց ժողովրդական մշակույթը» երկհատոր հանրագիտարանը, որի առաջին մասն ընթերցողի սեղանին դրվեց 2003 թ.: Այն պարունակում է հազարավոր բառհոդվածներ՝ նվիրված հայ ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթին, հասարակական ու տնտեսական կենցաղին: Այն կարող է սեղանի գիրք լինել հայագիտության ամենատարբեր հարցերով զբաղվող ուսումնասիրողների համար: Շուտով ընթերցողի սեղանին կդրվի հանրագիտարանի երկրորդ հատորը:

Մեծ է Գ. Կարախանյանի վաստակը հատկապես բուհական կրթության ասպարեզում: 1959-1993 թթ. նա պաշտոնավարել է Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում՝ դասավանդելով «հնագիտություն» և պատմության օժանդակ առարկաներ: 1990-1993 թթ. նույն ինստիտուտի Հայոց պատմության ամբիոնի վարիչն էր: 1994-1999 թթ. Հայ Առաքելական եկեղեցու հրավերով Գ. Կարախանյանը հայոց պատմություն է դասավանդել Երուսաղեմի պատրիարքարանի հոգևոր վարժարանում: Նույն թվականից առ այսօր դասավանդում է Երևանի պետական համալսարանի աստվածաբանության, այնուհետև պատմության ֆակուլտետներում՝ իր բազմամյա փորձն ու գիտելիքները հաղորդելով ապագա պատմաբաններին և հնագետներին:

Անուրանալի է Գ. Կարախանյանի վաստակը հայկական հնագիտական հուշարձանների ուսումնասիրության, դրանց պեղումների և մեկնաբանման գործում: Նա տարիներ ի վեր մասնակցել է Գառնիի, Դվինի, Արտաշատի, Արմավիրի, Շիրակավանի հնագիտական արշավախմբերին, գլխավորել Էջմիածնի, Մոզի, Խամշի վանքի, Լուսագյուղի, Վարդենուտի, Կարբիի, Աշոցքի արշավախմբերը: Գիտության համեստ նվիրյալին մաղթում ենք քաջառողջություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Հ. Ա.
Պատմական գիտությունների թեկնածու

Խմբագրության կողմից

«Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի խմբագրությունը շնորհավորում է վաստակաշատ գիտնականին, մաղթում նրան քաջառողջություն և հետագա հետազոտական արդյունավետ աշխատանք: